ՄԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. «ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ»

ԱՐՏԵՄՅԱՆ Լ. Ռ.

Հայրենական մեծ պատերազմը (1941-1945 թթ.) խլեց միլիոնավոր մարդկային կյանքեր, որոնց մեջ քիչ չէին նաև ստեղծագործող անհատները և մտավորականները: Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրի համար դարձել էր հոգու հրամայական, իսկ ԽՍՀՄ-ի համար այդ ծանր տարիներին ծնված ստեղծագործությունները նպատակ ունեին քաջալերելու խորհրդային երկրի բնակիչներին և ռազմիկներին, բարձրացնելու նրանց մարտական ոգին:

Ռազմահայրենասիրական թեման արծարծվում էր արվեստի, այդ թվում նաև երաժշտության գրեթե բոլոր ճյուղերում, հատկապես՝ երգարվեստում:

1941 թ. հունիսի 24-ին «Известия» և «Красная звезда» թերթերում առաջին անգամ տպագրվում են (երաժշտ.՝ Վ. Լեբեդև-Կումաչի, խոսք՝ Ա. Ալեքսանդրովի) «Священная война» (Սրբազան պատերազմ) երգի խոսքերը: Հունիսի 26-ին արդեն Խորհրդային Միությունը լսում է այդ երգը, որը դարձավ Հայրենական մեծ պատերազմի երաժշտական խորհրդանիշը: Այնուհետև ստեղծվեցին նաև մի շարք այլ երգեր, ինչպես՝ «Темная ночь» (Մութ գիշեր, երաժշտ.՝ Ն. Բոգոսլովսկու, խոսք՝ Վ. Ազատովի, 1943), «Смуглянка» (Թուխ աղջիկ, երաժշտ.՝ Ա. Նովիկովի, խոսք՝ Յա. Շվեդովի, 1944), «Заветный камень» (Նվիրական քարը, երաժշտ.՝ Բ. Մոկրոուսովի, խոսք՝ Ա. Ժարովի, 1944), որոնք բարձր գնահատվելով և սիրվելով հասարակության լայն շրջաններում՝ կենցաղավարում են առ այսօր:

Պատերազմական իրադարձությունները, խորհրդային մարդկանց և զինվորների ապրումներն արտացոլվում են ինչպես հերոսական, այնպես էլ քնարական ստեղծագործություններում: Ամենևին պատահական չէ, որ պատմական բեկումնային պահերին գրեթե միշտ զարթոնք է ապրել երգարվեստը: Ինչպես բնորոշել է Ա. Խաչատրյանը, «Երգը մարտնչող զինվոր է»[1]: Երգելը նաև միջոց է ավելի հեշտ տանելու կյանքի դժվարությունները:

---

[1] **Գրիգորյան Ս.,** *Մուսաները չլռեցին, գիրք առաջին, Ե., 1989, էջ 8:*

Ռազմահայրենասիրական թեման, անշուշտ, չէր կարող անտարբեր թողնել նաև բազմաթիվ հայ կոմպոզիտորների (Ա. Խաչատրյան, Ա. Բաբաջանյան, Ղ. Սարյան, Մ. Միրզոյան, Ա. Սաթունց, Ա. Տեր-Ղևոնդյան և այլք), որոնց թվում էր նաև տաղանդաշատ կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը (1906-1958):

Երաժշտարվեստի երախտավոր, հասարակական գործիչ, դիրիժոր, կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Աշոտ Մովսեսի Սաթյանը[2] (ծնվել է Թուրքմենիայի Մերվ քաղաքում), 1921 թ. կամավոր անցնելով Կարմիր բանակի շարքերը՝ ծառայել է զինվորական նվագախմբում, նախ՝ որպես փողհար, ապա՝ նվագախմբի ղեկավար: Այնուհետև 1926-1930 թթ. սովորել է Բաքվի Հայ արվեստների տան երաժշտական տեխնիկումում: 1930 թ. ընդունվել է Երևանի կոնսերվատորիայի կոմպոզիտորական (Հարո Ստեփանյանի և Սարգիս Բարխուդարյանի դասարան) և դիրիժորական (Կոնստանտին Սարաջևի դասարան) ֆակուլտետները՝ ուսումն ավարտելով 1936 թ.: Ուսումնառությանը զուգահեռ նա աշխատել է Գ. Սունդուկյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնում՝ որպես երաժշտական ղեկավար և դիրիժոր, 1939-1947 թթ. գլխավորել է Հայֆիլմ կինոստուդիայի երաժշտական բաժինը, 1948-1952 թթ. եղել Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահը:

Ընդամենը 52 տարեկան հասակում կյանքից հեռացած կոմպոզիտորը երաժշտական բազմաժանր ժառանգություն է թողել, օրինակ՝ «Զանգեզուրի լեռներում» սիմֆոնիկ պատկերները, «Լեռների երգեր» (1958) և «Արարատյան հովտի երգեր» (1950) վոկալ-սիմֆոնիկ շարքերը (վերջինս 1952 թ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի), փողային նվագախմբի համար գրված՝ «Զաքյանի դիվիզիայի քայլերգը»: Կամերային ստեղծագործությունը ներկայացնում է հայկական առաջին լարային կվարտետը, որը կոնսերվատորիայի ավարտական դիպլոմային աշխատանքն էր և, ի դեպ, նվիրվել է Կոմիտասի անվան լարային քառյակին, առաջին անգամ հնչել քառյակի կատարմամբ:

Շուրջ 50 թատերական բեմադրություններից բարձր գնահատականի են արժանացել հատկապես Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը», Գ.

---

[2] *Աշոտ Սաթյանի մասին մանրամասն տե՛ս* **Թաշչյան Ս.,** *Աշոտ Սաթյան, Ե., 1965:* **Атаян Р.** *Ашот Сатян (Музыкальная энциклопедия, т. 4, М., 1978, с. 866). Աշոտ Սաթյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), կազմող և խմբա-գիր՝ Շչորս Դավթյան, Ե., 2007:*

Սունդուկյանի «Պեպոն», Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարը» և այլն: Իսկ «Սովետական Հայաստան» վավերագրական կինոնկարի «Խաղաղության երգը» 1951 թ. Կարլովի Վարիի միջազգային կինոփառատոնում արժանացել է մրցանակի: Այնուամենայնիվ, Ա. Սաթյանի անունը հավերժացել է երգարվեստում: Բազմաթիվ խմբերգերի, երգերի և ռոմանսների հեղինակի ստեղծագործությունները մեծ ժողովրդականություն են վայելել և շարունակում են շրջանառվել առ այսօր: Արժե նշել, որ հայկական հեռուստատեսության հաղորդումների հեռարձակումը երկար տարիներ մեկնարկել է Ե. Չարենցի խոսքերով գրված «Ես իմ Անուշ Հայաստանի»՝ Ա. Սաթյանի երգով: Ա. Սաթյանը բավական տևական համագործակցություն է ունեցել խորհրդային քնարերգության հիմնադիրներից մեկի՝ ՀԽՍՀ և ՈՒԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ, մեծ հայրենասեր Գեղամ Սարյանի[3] (1902-1973) հետ: Ի թիվս հայ մյուս պոետների, Գ. Սարյանը նույնպես անդրադարձել է Հայրենական մեծ պատերազմին. այդ թեմայով գրել է «Խոսք բարի երթի», «Պատգամ», «Գնա, թող քո հոգին երբեք չամպի», «Մայրական խոսքեր» և այլ բանաստեղծություններ:

Երկու հայրենասեր և տաղանդավոր անհատների՝ Ա. Սաթյանի և Գ. Սարյանի ստեղծագործական համագործակցության հրաշալի օրինակ է «Մարտիկի երգը»[4]: Ավ. Իսահակյանը գրում է. «Եթե Ա. Սաթյանը միայն «Մարտիկի երգը» գրած լիներ, ապա դա բավական էր, որպեսզի նա Սաթյան դառնար»[5]: Այն առաջին անգամ հնչել է 1944 թ. ՀՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, հայ օպերային տաղանդաշատ երգիչ Ավագ Պետրոսյանի կատարմամբ: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը գրում է. «Բազմաթիվ երգեր են կոմպոզիտորները գրել հենց Ա. Պետրոսյանի համար:

---

[3] *Գ. Սարյանի մասին տե՛ս* **Մանուկյան Ս.,** *Գեղամ Սարյան, Ե., 1954:* **Մնացականյան Վ.,** *Գեղամ Սարյանի պոեզիան, Ե., 1963:* **Ռշտունի Ռ.,** *Գեղամ Սարյան, Ե., 1958: Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 10 (Գեղամ Սարյան), Ե., 1984:*

[4] *Երգի ստեղծման տարեթվի վերաբերյալ գոյություն ունեն մի քանի տեսակետներ: Ըստ Ս. Թաշչյանի, այն գրվել է 1945-ին «Սովետական Հայաստան» կինոֆիլմի համար (տե՛ս* **Թաշչյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 43): Մեկ այլ աղբյուրից տեղեկանում ենք, որ այն հնչել է պատերազմի թեժ օրերին և գրվել է Գ. Սարյանի «Կարոտ» բանաստեղծության հիման վրա (* **Գրիգորյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 11): «Ավագ Պետրոսյան-100» մենագրության մեջ կարդում ենք հետևյալ տեղեկությունը՝ երգը կյանքի ուղեգիր է ստացել 1944-ին, Ավագ Պետրոսյանի կողմից (* **Ասատրյան Ա.,** *Ավագ Պետրոսյան-100, Ե., 2012 էջ 56): Մենք հիմնվել ենք Ա. Ասատրյանի հետազոտության տվյալների վրա:*

[5] **Թաշչյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 45:*

Դրանցից է Աշոտ Սաթյանի քնարական «Մարտիկի երգը»՝ Գեղամ Սարյանի խոսքերով: Հրաշալի երգը գտավ իր անզուգական ու անկրկնելի մեկնաբանին: 1944-ին, տակավին 32 տարեկան երգչի կողմից կյանքի ուղեգիր ստացած երգը հետագայում Ա. Պետրոսյանի քնքուշ ու թովիչ կատարմամբ թևածեց աշխարհի տարբեր բեմերից»[6]:

Ավագ Պետրոսյանը մի առիթով խոստովանել է. «Այդ երգը երկու առումով հիշարժան է իմ կյանքում. առաջինը, որ անձամբ մարշալ Բաղրամյանի, օպերային թատրոնի լեփ-լեցուն դահլիճի որոտընդոստ ծափերի տակ երեք անգամ երգը կրկնելուց հետո ինձ անդրանիկ պատվավոր կոչումը շնորհվեց՝ հանրապետության վաստակավոր արտիստ, և երկրորդ, որ այսօր նույն դահլիճի կամարների տակ ինձ շնորհ է արվում Մեծ հաղթանակի փառապանծ 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի գեղարվեստական բաժնում, արդեն 84-ամյա հասակում, նորից հանդես գալու այդ ծանր ժամանակները բնութագրող հիասքանչ երգի կատարմամբ: Եվ այս առիթով, օգտվելով ընձեռված պատեհությունից, ուզում եմ տարիների հեռվից հիշած լինել բոլոր-բոլորին, ովքեր շունչ ու ոգի տվին այդ երգին, ովքեր ունկնդրեցին, վշտացան, տոկացին ու վայելեցին հաղթանակի բերկրանքը, ովքեր, ավաղ, բախտ չունեցան տուն դառնալ կրկին ու համբույրով կաթոգին սփոփել մայրերի հոգին... Փառք ու պատիվ ողջերին, հավերժ հիշատակ՝ գնացողաց...»[7]:

Սաթյանն այն եզակի կոմպոզիտորներից էր, որը մեծ ուշադրություն էր դարձնում ձայնի ընտրությանը: Կատարողական ակադեմիական ճշգրտությամբ և պրոֆեսիոնալ բարձր վարպետությամբ է առանձնանում Ավագ Պետրոսյանի մեկնաբանությունը: Պատերազմի թեժ օրերին «Մարտիկի երգը» հնչել է Մոսկվայի Կարմիր հրապարակում՝ փողային նվագախմբի կատարմամբ[8]: Երգում արտացոլվել են խորհրդային զինվորի հույզերը, խոհաքնարական ապրումները, որին կռվի կարճատև դադարի ժամանակ հիշողությունը տանում է դեպի կարոտած մայրը, հայրենի տունն ու բնաշխարհը: Կոմպոզիտորական «փոքր» ձևում Ա. Սաթյանը փոխանցել է բանաստեղծական երևակայելի և անիրական կերպարայնությունը: Քնարական և զգացմունքային շարադրանքում երաժշտությունն ընկալվում

---

[6] Ասատրյան Ա., *նշվ. աշխ., էջ 56:*

[7] *Նույն տեղում, էջ 56-57:*

[8] Գրիգորյան Ս., *նշվ. աշխ., էջ 11:*

է որպես հիշողություն լուսավոր ժամանակների մասին, որը ուժ է տալիս մարտնչելու և հանուն կարոտած մոր հերոսություն ցուցաբերելու, կյանքի գեղեցիկ պահերը կրկին վերապրելու ցանկությամբ համակում:

«Մարտիկի երգում» առկա է ձևի և բովանդակության յուրահատուկ համադրություն: Երգը գրված է g-moll տոնայնությամբ: Ամբողջ ընթացքում տոնայնական հենքը մնում է անփոփոխ: Կոմպոզիտորը, մեղեդու դիապազոնը տեղավորելով գրեթե մեկ օկտավայի սահմաններում, ամբողջացրել է տեքստի կերպարային բովանդակությունը: Դաշնամուրային նվագակցության մեջ բասում առկա ռեպետիտիվ շարադրանքը «կանգնած» ժամանակի տպավորություն է ստեղծում, քանի որ երաժշտության մեջ կրկնության ցանկացած սկզբունք հիմնական ժամանակը դադարեցնելու պատրանք է առաջացնում, ինչն էլ ցայտուն փոխանցում է կերպարայնությունը: Այս զգացմունքային շարադրանքում ակնհայտ է մեդիտատիվ իմպրովիզացիան, որում անգամ թեմատիկ առանցքն ընկալվում է մետրից դուրս, թեև մետրական բաբախումն իրականում առկա է: Ընդհանրապես, Ա. Սաթյանի երգերն առանձնանում են մեղեդային ինքնատիպությամբ, իսկ ինտոնացիոն ոլորտն այնքան մոտ է ժողովրդականին, որ ասես խզվում է հեղինակային և ժողովրդական երգի սահմանագիծը: Ժողովրդական ստեղծագործության բնորոշ առանձնահատկություններին միախառնելով կոմպոզիտորական ուրույն գրելոճը՝ կոմպոզիտորը ստացել է գեղարվեստական բարձրաճաշակ և բարձրարժեք ստեղծագործություն:

Թեև երգը ժամանակին «արժանացել է» սուր քննադատությունների, այնուամենայնիվ, այն մնացել է ժամանակակիցների և հետագա սերունդների հիշողություններում, դարձել է հասարակության սեփականությունը: «Մարտիկի երգը» Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի ամենասիրելի երգն էր, որն ունկնդրելիս նա միշտ արտասվում էր[9]: Հատկանշական է, որ «Մարտիկի երգը» ոչ միայն ժամանակի ընթացքում չի կորցրել իր հմայքը, այլև արդիական է նաև մեր օրերում:

Թեպետ Մեծ Հայրենականի տարիներին ստեղծվեցին բազմաթիվ երգեր, սակայն դրանցից ոչ բոլորին է վիճակվել ապրել այսքան երկար: Երգի հաջողությունը կախված է երեք կարևորագույն նախադրյալներից՝ լավ երաժշտություն, խոսք և մեկնաբան: Միայն այս երեքի առկայությունն է

[9] **Ասատրյան Ա.,** *էջ 58:*

ստեղծագործության իրական հաջողության գրավականը: Հավանաբար, «Մարտիկի երգին» վիճակված էր այսպիսի մեծ հաջողություն, քանի որ ունեցավ և՛ տաղանդաշատ կոմպոզիտոր, և՛ շնորհաշատ պոետ, և՛ անզուգական կատարող:

ИСТОРИЯ ОДНОГО ПРОИЗВЕДЕНИЯ: “ПЕСНЯ БОЙЦА”

АРТЕМЯН Л. Р.

Резюме

Один из шедевров песенной лирики на тему Великой Отечественной войны – “Песня бойца” являет собой ярчайшую страницу сотрудничества двух талантливых личностей – выдающегося музыканта, общественного деятеля, композитора, заслуженного деятеля искусств Арм. ССР, лауреата Государственной премии СССР Ашота Сатяна (1906-1958) и заслуженного деятеля искусств Арм. ССР и УССР Гегама Сарьяна (1902-1973). Произведение впервые прозвучало в 1944 г. в исполнении заслуженного артиста Арм. ССР, лауреата Государственной премии СССР, из-вестного армянского оперного певца Авага Петросяна.

Перешагнувшая семидесятилетний рубеж “Песня бойца” не потеряла свою актуальность и в наши дни.

THE STORY OF ONE COMPOSITION: “A SOLDIER’S SONG”

L. ARTEMYAN

Abstract

The paper dwells on one of the masterpieces of song lyrics on the topic of the Great Patriotic War – “A Soldier’s Song”. It is a bright evidence of cooperation of two talents – the outstanding musician, public figure, composer, Honored Worker of Arts of Arm. SSR, the USSR State Prize Winner Ashot Satyan (1906-1958), and one of the founders of Soviet Armenian lyric poetry, Honored Worker of Arts of Arm. SSR and Ukr. SSR Gegham Saryan (1902-1973). The song was first performed in 1944 by Honored Artist of Arm. SSR, the USSR State Prize Winner, the renowned Armenian opera singer Avag Petrosyan.

It is remarkable that the “Soldier’s Song” is over 70 years old, yet it has not lost its attractiveness and sounds no less contemporary in our days.